26.07.2023
351-30

Արտաքին գործերի նախարար
Արարատ Միրզոյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Միրզոյան,

Ի պատասխան Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2023 թ. հուլիսի 13-ի տեղեկություն ստանալու հարցման՝ ԱԳՆ-ն հուլիսի 18-ին տրամադրել էր պատասխան գրություն, որով առաջին և երկրորդ հարցերի պատասխանների համար առաջարկվում է օգտվել ինտերակտիվ բյուջեի հղումից։ Տրամադրած հղումը, սակայն, հնարավորություն չի տալիս ստանալու ԻԱԿ-ի կողմից ներկայացված հարցերի պատասխանները (պատասխան գրություն՝ կից)։

Ուստի համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Որքա՞ն գումար է ծախսել Նախարարությունը տեղեկատվական/իրազեկման արշավների կազմակերպման և իրականացման նպատակով 2022 թվականի ընթացքում։ Խնդրում ենք պետական բյուջեով և այլ ռեսուրսներով իրականացված ծախսերը ներկայացնել առանձնացված։
2. Որքա՞ն գումար է նախատեսված Նախարարության տեղեկատվական/իրազեկման արշավների կազմակերպման և իրականացման նպատակով 2023 թ.-ի համար։ Խնդրում ենք պետական բյուջեով և այլ ռեսուրսներով իրականացված ծախսերը ներկայացնել առանձնացված։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում։

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am